

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ա.

Ս. Էջմիածնի Միաբանութիւնը—հեղինակութիւն է. նա մի ամփոփ, ամբողջական գաղափար է. կարող ենք մեզ ներկայացնել, թէ նա ինչ է, որովհետեւ նա մի զգալի, շոշափելի մարմին է, որոշ, իրեն յատուկ գործողութիւններով, որ նրանից դուրս ոչ ոք չի կարող կատարել. նա ունի անցեալ, դարաւոր, պատմական հաստատութիւն և կազմակերպութիւն. Ս. Էջմիածնի միաբանութիւնը ունի գոյութեան իրաւունք, քրիստոնէական, ընկերվարական իրեն աւանդած պարտիքների կատարելով. նա մի փոքրիկ սահմանադիր ժողով է, իշխանութիւն է. նրա օրէնքը ս. Աւետարանն է, որին նա պաշտում է, ծառայում է, սովորեցնում է, տարածում է և պահպանում: Միաբանութիւնը մի ընկերութիւն է նախորդների կանոններով շաղկապուած. Ս. Էջմիածնի գոյութեան ամենագլխաւոր սիւներից մինն է անպայման նրա միաբանութիւնը, առանց միաբանութեան Ս. Էջմիածին չի կարող լինել. Դժբախտաբար Ս. Էջմիածնի միաբանութեան պակասում է յատուկ գրեւծ պատմութիւն և կանոնադրութիւն, սակայն կան զօրեղ աւանդութիւններ, որոնցով նա դեռ ապրում է. բայց արդէն աղաղակող ժամանակի պահանջ է, որ նա քաղուածք անէ զանազան աղբիւրներից իւր յատուկ պատմութիւնը, կազմէ իւր անդամների մանրամասն կենսագրութիւնները, ժողովէ նրանց պատկերները, կազմէ Ս. Էջմիածնի միաբանութեան լիակատար, ընդարձակ կանոնադրութիւնը:

Եթէ Ս. Էջմիածինը հայ ազգի համար կենսական է և անհրաժեշտ, միաբանութիւնն էլ Ս. Էջմիածնի համար կեանքի անպայման հիմքն է, ուստի նա պիտի իւր կազմակերպութիւնը վերանորոգի, պարզ և որոշ գծէ իւր սահմանները մի կողմ կանոնադրութեամբ, որ նոր զարկ,

կենդանութիւն, եռանդուն—արդիւնաւէտ գործունէութիւն
 և պատկառելիութիւն կը տայ նրան։ Ներկայ տաղանապալից
 (կրիզիսային) միջոցին դրա կարեւորութիւնը ակներև է.
 մեր աչքի առաջ կսկծալով նկատու՛մ ենք միաբանութեան
 քայքայման օրհասական նշաններ, կազմալուծութիւն, գե-
 դեցիկ, քրիստոնէական և ընկերաբարական, ազդեցիկ և
 կրթիչ կանոնների, սովորոյթների, աւանդութիւնների մե-
 րացում, ոչ թէ կարեւորութիւնից, այլ ապիկարութիւնից.
 և ընդհակառակն ցաւալի է խոստովանել, բոյն են դնում
 միաբանութեան մէջ վատ ու քայքայիչ իրեն և ազգին
 փնասակար սաղմեր. ժամ է արթնանալ։

Բ.

Միաբանութիւնը հիմնական ամբողջութիւն, կազմա-
 կերպութիւն է. նրանից են դուրս գալիս կաթուղիկոս,
 Սինոդի անդամներ և այլն. ուստի միաբանութեան մէջ
 անդամ մտնողը պիտի ամբողջ միաբանութեան ձայնով,
 հաւանութեամբ ընդունուի կաթուղիկոս ընտրելիս ամե-
 նից շատ ձայն ունի միաբանութիւնը, միաբանութիւնն է
 հիմնական աւանդապահը. միաբանութիւնը իւր ընտրած-
 ների վրայ հսկողութեան իրաւունք ունի. ուստի կաթու-
 ղիկոսը մեր եկեղեցական օրէնսդրութեան ճիշտ իմաս-
 տով սահմանադրուած է միաբանութեամբ։ Դրա համար
 Ս. Էջմիածնի մէջ միաբանութեան անդամ չի կարող
 հրամանով նշանակուած լինել, այլ միաբանական ժողովով,
 ուր ձայն ունին և կաթողիկոսը և Սինոդի անդամները.
 վերջիններս կարող են առաջարկել մէկին միաբան, ոչ թէ
 իրենց կամքով և հրամանով մտցնել։ Միաբանութիւն չի
 կազմուիլ վարձկան, զանազան հոգու ուղղութեան մարդ-
 կանցից. միաբանութիւնն է մի սերտ, համակամ, համա-
 միտ, համաձայն, կամովին ձեռք ձեռքի տուած մարդկանց
 մի ընկերութիւն, մի եղբայրութիւն հաստատուած Քրիս-
 տոսի անունով, նրա սուրբ Աւետարանը քարոզելու աշ-
 խարհի մէջ։ Ս. Էջմիածնի միաբանութեան կազմալուծուե-
 լով, այդ մեծ ազգային հաստատութիւնը կընկնի. մեծ

բարոյական պատասխանատուութիւն կայ Ս. Էջմիածնի միաբանութեան «մնացորդների» վրայ:

Ս. Էջմիածինը ապրելու համար պիտի վերածնի, դրա համար իսպառ խաղաղութեամբ միաբանութիւնը պիտի վերանորոգուի, վերահաստատի իւր նշանակութիւնը և մտնի գիտակցաբար իւր դերի մէջ, կազմելով ու հաստատելով մի հիմնաւոր կանոնադրութիւն, որ միաբանն իմանայ ինչ է ինքը. ոչ մի կիւլտիւրական գործ առանց գրաւոր կանոնադրութեան չի կարող լինել:

Միաբանութիւնը պիտի ունենայ մի ներքին, եռուն, ծննդական կեանք, հանրակեցական ձեւերով, որով նրանք սեղմ՝ կը շաղկապուին իրար հետ, միասին խորհելով, միասին մտածելով, միասին կը թուելով ու միասին սնուելով կը կազմեն մի ընտանեկան եղբայրութիւն, միութիւն, իսկ միութիւնն է զօրութիւն:

Խուցը՝ առանձնարանն անհրաժեշտ է ի հարկէ. բայց միաբանութեան զարգացման համար ևս առաւել անհրաժեշտ է մի ընդհանուր դահլիճ ժամանցի և ժողովների համար. ընդհանուր սեղանատուն միասին ճաշելու, եթէ ոչ ամեն օր, գոնէ անպատճառ կիւրակէ և տօն օրերը, ընթերցարան և այլն: Բացի սովորական ժամանցի համախմբումից ընդհանուր դահլիճում, շաբաթը մի անգամ՝ անպատճառ միաբանական ժողով լինի, ուր խօսուին կամ կարգացուին Էջմիածնական, եկեղեցական, դպրոցական, հրատարակչական և այլ պատշաճի խնդիրների վրայ: Միաբանութիւնը մի այնպիսի կարևոր և պատկառելի մարմին է, որի լուսաւորեալ անդամները պիտի պայծառ և նախանձելի վիճակի մէջ պահեն և կառավարեն այս մեծ տունը՝ Մ. Աթոռը. նրա ընդունակ անդամները պիտի կառավարեն ձեմարանը, կրթիչ և հրահանգիչ դարձնեն «Արարատ»ը, ժողովրդի համար կրօնաբարոյական բօշիւներ հրատարակեն, թարգմանեն քիչ-քիչ սուրբ Գրքերը. նրա անդամները պիտի ելնեն շինարար, լուսամիտ, զարգացած առաջնորդներ, յաջորդներ: